ՀՀ Արագածոտնի մարզպետ Աշոտ Սիմոնյանի ուղերձը
Բանակի օրվա կապակցությամբ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ Բանակի օրվա կապակցությամբ:

Հունվարի 28-ը մեր երկրի տոնացույցում հիշատակվում է իբրեւ Բանակի օր: Տոն, որը խորհրդանշական է եւ իր մեջ պարունակում է հայրենասիրության, ազատատենչության եւ անկախության նվիրական գաղափարները:

1992թ. հունվարի 28-ին մեր երկրի Կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշումը՝ դրանով իսկ իրավականորեն ազդարարելով Հայոց Ազգային բանակի ստեղծումը:

Բանակը մեր պետության անկախության տարիների ամենամեծ ձեռքբերումներից է, որով, հիրավի, հպարտանում ենք ազգովի: Այն ստեղծվեց մեր երկրի նորագույն պատմության ամենապատասխանատու ժամանակաշրջանում: Բանակը ձեւավորվեց Արցախյան ազատամարտի բովում՝ մեր ժողովրդի միասնական կամքով, անձնուրաց եւ անմնացորդ նվիրվածությամբ ու նպատակադրվածությամբ:

Այսօր էլ Հայոց բանակն արժանապատվորեն է կատարում իր հայրենանվեր առաքելությունը: Նրա շնորհիվ ապահովված են մեր երկրի խաղաղ կեցությունն ու սահմանների անառիկությունը:

Սիրելի՛ հայրենակիցներ, բոլորիս խնդիրը մեր հերոսական բանակի պահպանումն ու ամրապնդումն է, ազգ-բանակ գաղափարի շուրջ հանրության բոլոր շերտերի, երկրի մաս կազմող անհատների համախմբումն ու ուժերի մեկտեղումը:

Վերստին շնորհավորում եմ ռազմական գործի բոլոր նվիրյալներին, ողջ հայ ժողովրդին: Մաղթում եմ հզորություն, անպարտելիություն եւ հավերժ խաղաղություն: